«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ <<ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՄԱԳՈՐԾԱՑԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ>>

Առարկան՝ Անգլերեն

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Մելիքսեթյան

Ուսումնական հաստատություն՝ << ՀՀ Լոռու մարզի Արևածագի Կարո Մելիքսեթյանի անվան միջնակարգ . դպրոց>> ՊՈԱԿ

Երևան 2023

Բովանդակություն

1. Ներածություն ---------- էջ 3

2. Հիմնական բովանդակություն ---------- էջ 4

3.Եզրակացություն ---------- էջ 18

4.Գրականություն ---------- էջ 19

Language is our cultural tool—we use it to share experience, and so to collectively, jointly, make sense of it . . . Language is therefore not just a means by which individuals can formulate ideas and communicate them, it is also a means for people to think and learn together.
—Neil Mercer, *The Guided Construction of Knowledge*

Լեզուն մեր մշակութային գործիքն է. մենք այն օգտագործում ենք ոչ միայն փորձի փոխանակման համար և այլ նաև հավաքականորեն, համատեղ, իմաստավորելով: . . Հետևաբար, լեզուն պարզապես միջոց չէ, որով անհատները կարող են գաղափարներ ձևակերպել և հաղորդակցվել: Դա, նաև մարդկանց համար միասին մտածելու և սովորելու միջոց է:

— Նիլ Մերսեր, Գիտելիքի առաջնորդվող կառուցումը

c

Ներածություն

Արդյունավետ դասավանդման համար ժամանակակից դպրոցում ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման մեթոդների ճիշտ օգտագործում և որոշակի կարողությունների ձևավորում: Ուսուցիչը պետք է կազմակերպի այնպիսի ուսուցում, որի ընթացքում սովորողը կարողանա մտածել, ինքնուրույն գտնել իրեն ուղղված հարցի պատասխանը, կարողանա օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաները: Ներկայումս յուրաքանչյուր ուսուցիչ դասավանդման ընթացքում օգտագործում է բազմաթիվ մեթոդներ և հնարներ, որոնք արդյունավետ են դարձնում դասապրոցեսը: Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք դասավանդման գործընթացը դարձնում են ավելի արդյունավետ և մեծացնում են սոցիալական շփման հնարավորությունները: Հիմնական խմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է:

Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է, որը ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը: Համագործակցային ուսուցումը ներգրավվում խմբի բոլոր անդամներին, ովքեր աշխատում են միասին, ապահովելով յուրաքանչյուրի մասնակցությունը: Նրանք աշխատում են առանձին առաջադրանքների շուրջ , բայց ունեն ընդհանուր արդյունք:

Համագործակցության ուսուցումը իրականացվում է տարբեր նպատակներով և այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է օգտագործել տարբեր մեթոդներ: Նրանք շատ բազմազան են և մեթոդի ընտրությունից է կախված դասի արդյունավետությունը:

Համագործակցային ուսուցման մեթոդներից են՝

Աշակերտների թիմային առաջադիմություն, Խճանկար, Շրջագայություն պատկերասրահում, Երեք բանալի և մեկ կողպեք, Հինգրոպեանոց ազատ շարադրանք, Ձնագնդի, Դերախաղ- մնջախաղ, Մտածող գլխարկներ, Անկյուններ, Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, հաղորդի՛ր, Վեբ-որոնում, Մտքերի քարտեզագրում և այլն :

Համագործակցային մեթոդները բազմաթիվ են ու բազմազան: Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով, սակայն անչափ կարևոր է մեթոդի ճիշտ ընտրությունը:

Համագործակցային մեթոդները կարող ենք օգտագործել ԽԻԿ համակարգի 3 փուլերում:

Հիմնական բովանդակություն

Համագործակցային խմբերը երբեմն ընտրում է ուսուցիչը (ցածր դասառանեներում), իսկ բարձր դասարաններում խմբի անդամները իրենք են ընտրում իրենց խմբերը :

Համագործակցային ուսուցում - Ուսումնական խմբի անդամների միջև փոխազդեցություն կազմակերպելու գաղափարը առանձնացվել ու մանկավարժության մեջ ամրագրվել են դեռևս 18-րդ դարում :

Դրանց թվին են պատկանում.

-*Բել-Լանկաստերյան համակարգը*, որը հայտնի էր դեռ XVIII դարի վերջերից:

Ուսումնական պարապմունքների կազմակերպման հիմնական սխեման հետևյալն է. ուսուցիչն ուսումնական խմբի անդամներից ընտրում է մի քանի ընդունակ աշակերտների և հիմնականում աշխատում նրանց հետ: Ընտրված աշակերտներից յուրաքանչյուրին կցվում է աշակերտական փոքրաքանակ խումբ, որտեղ նրանք կատարում են ուսուցչի դերը:

- *Բրիգադային մեթոդը*. - XX դարի առաջին կեսին լայն տարածում գտած մոտեցումներից է: Ուսումնական խումբը բաժանվում է փոքր ենթախմբերի՝ բրիգադների: Յուրաքանչյուր բրիգադում փոխօգնության և համագործակցության միջոցով իրագործվում են ուսումնական նպատակները, իսկ յուրաքանչյուր աշակերտի արդյունքը գնահատվում է ընդհանուր բրիգադի ցուցանիշներով:

- *Ռիվինյան երկխոսության զուգորդությունների մեթոդը.*

Արդեն XX դարասկզբին որոշ մանկավարժներ ուսումնական պարապմունքներ կազմակերպելիս սկսեցին օգտագործել աշակերտների՝ զույգերով հաղորդակցման ձևերը: Այս նորամուծության հիմնադիրն ու հիմնական կիրառողը Ա.Ռիվինն էր: Նրա կազմակերպած պարապմունքներն առաջին հայացքից բավական պարզ էին: Սովորողներից յուրաքանչյուրն իր ուսումնական նյութը յուրացնելու համար աշխատում էր դասընկերներից մեկի հետ: Որոշ ժամանակ համատեղ աշխատելուց հետո նա այդ դասընկերոջից բաժանվում էր, մոտենում մեկ այլ աշակերտի և սկսում աշխատել նրա հետ: Հաղորդակցվելով զույգերով՝ մեկը մյուսի հետ, աշակերտները կատարում էին տարբեր աշխատանքներ՝ իրար բացատրում էին նոր թեմաները, համատեղ լուծում խնդիրներ, քննարկում տարբեր հարցեր, մեկը ստուգում էր մյուսի՝ նյութի յուրացման մակարդակը և այլն: Հետագայում Ռիվինի հայտնագործությունները զարգացվեցին ու կիրառվեցին իր աշակերտների ու հետևորդների կողմից: Շարժման ներկայացուցիչների (Ռիվին, Վիխման, Բրեյտերման, Կոլեսնիկով և ուրիշներ) մտքով անգամ չէր անցնում, որ իրենց հայտնագործությունները ոչ միայն սովորական մանկավարժական հնարքներ են, այլև կարող են հիմք հանդիսանալ ընդհանրապես ուսուցման կազմակերպման նոր եղանակի ստեղծման համար:

- *Մոնտեսորիի համակարգը.*

XIX դարի վերջին ձևավորված մեթոդ, որը որոշ չափով կարողացավ համատեղել անհատական ինքնուրույնության և ընկերական փոխօգնության գաղափարները ուսուցման կազմակերպման գործընթացում: Դա հատկապես հաջողվեց տարրական դպրոցում: Հետագայում այս մեթոդի ձևափոխված տարբերակը լայն տարածում գտավ նաև միջին դպրոցում, որը հայտնի է որպես Դալտոն-պլանի մեթոդ:

Կարելի է նշել երկու կարևոր հանգամանք.

1. ուսումնական խմբի անդամները ոչ թե գտնվում են մրցակցային հարաբերություններում, այլ ընդգրկվում են համագործակցային փոխազդեցության գործընթացներում,
2. ուսումնական պարապմունքներին բնորոշ է ընդհանուր ճակատի բացակայության որոշակի աստիճան:

-*Կոլեկտիվ ուսուցում*

Ինչպես արդեն վերը նշվեց, խմբային ուսումնական գործընթացի կառուցվածքային հիմքում ընկած է ուսուցիչ-աշակերտական խումբ փոխազդեցության ձևը: Ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ իր ուսումնական նպատակներն ու խնդիրներն իրագործում է մյուսների օգնությամբ՝ միաժամանակ օգնելով մյուսներին իրագործել իրենց խնդիրներն ու նպատակները: Համագործակցությունը չի սահմանափակվում միայն համատեղ ֆինարկումներով: Աշակերտների միջև փոխազդեցությունը կազմակերպվում է փոխուսուցման, համատեղ ուսումնասիրությունների, փոխստուգման, փոխվարժանքի և այլ նմանատիպ նպատակներով: Այսպիսով, եթե հետևելու լինենք մանկավարժական պրակտիկայի պատմական զարգացմանը, ապա կարելի է նկատել հետևյալը. սկսած միջին դարերից՝ սկզբնավորվում, աստիճանաբար ձևավորվում ու համընդհանուր գերակայություն է ստանում ուսուցման կազմակերպման խմբային եղանակը: Միաժամանակ, արդեն կայացած խմբային եղանակի ընդերքում սաղմնավորվում և աստիճանաբար նշմարելի իրողություն է դառնում ուսուցման կազմակերպման կոլեկտիվ եղանակի գաղափարախոսությունը ներկայացնող համագործակցային ուսուցումը: Համագործակցական ուսումնառությունը տեղի է ունենում, երբ աշակերտները միասին են աշխատում ՝զույգերով կամ փոքր խմբերով լուծելու համար մի ընդհանուր խնդիր, հետազոտելու համար մի ընդհանուր թեմա կամ մի նոր միտք կամ նորարարություն իրականացնելու համար:

Համագործակցային մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք ստեղծելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց: Աշակերտների մոտ ձևավորվում է ֆինադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները: Այս մեթոդը կիրառելիս պետք ի հաշվի առնել կազմակերպման եղանակները, որոնք պետք է ընտրվեն կրթության բովանդակության և անհրաժեշտ մեթոդաբանության, ինչպես նաև աշակերտների կարիքներին համապատասխան: Բացի գիտելիք ձեռք բերելուց, աշակերտները հնարավորություն ունեն ցուցաբերելու էմպատիա, անկախ մտածելակերպ, համբերություն,

հանդուրժողականություն, պատասխանատու և սատարող մոտեցում: Ավելին, նրանք զարգացնում են հաղորդակցվելու ունակությունները, համագործակցային աշխատանքի և կազմակերպչական հմտությունները, ինչպես նաև որդեգրում են օժանդակություն ցուցաբերելու և ստեղծագործ մոտեցումներ:

Ըստ Ջոնսոնների (Johnson & Johnson, 1999a; Johnson, Johnson, & Holubec, 1998b). գոյություն ունեն համագործակցային ուսուցումը կիրառելու 3 փոխկապակցված ձևեր:

Համագործակցային ուսուցման խմբերի տեսակները.

1. Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր (formal cooperative learning groups),

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ:Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է ՝

- խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
- պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
- բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,

յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

2.Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր (informal cooperative learning groups)

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտագործվող նյութերը նախապատրաստելու համար:

3.Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր (cooperative base groups)

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը:Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. *Դրական փոխկախվածություն.*

Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջացելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. *Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն.*

Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. *Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.*

Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. *Սոցիալական հմտություններ.*

Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:

5. *Խմբային գործընթաց.*

Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն / ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հետությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

<<Մեթոդը>> հունարենից փոխառնված բառ է և ընդհանուր իմաստով նշանակում է , <<որևէ նպատակի հասնելու, խնդիր լուծելու եղանակ>> իսկ բառացի թարգմանությանբ՝ << ինչ-որ տեղ տանող ճանապարհ >>:

''Ուսուցման մեթոդ" հասկացությունն իր մեջ ներառում է երեք խնդիր՝

ինչ սովորեցնել/ կրթության բովանդակություն/,

ինչի համար սովորեցնել/կրթության նպատակներ/ և

ինչպե՞ս սովորեցնել /ուսուցման մեթոդիկա/:

Կրթության բովանդակությունը /ի՞նչ սովորեցնել/ մատուցելու և կրթության նպատակներն /ինչու սովորեցնել/ իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ, ձևեր, եղանակներ: Լինելով ուսման միջուկը՝ մեթոդը իրար է կապում ուսուցման նախապես պլանավորած նպատակը և վերջնական արդյունքը:

Երբեմն կարելի է գործածել ոչ թե մեթոդն ամբողջությամբ, այլ նրա առանձին տարրեր: Հնարը սովորաբար անկախ կիրառություն ունի, բայց այն հաճախ բնութագրվում է որպես մեթոդի բաղադրիչ, դրա իրականացման քայլ:

Մեթոդների ընտրության ժամանակ հարկ է հաշվի առնել հետևյալ գործոնները.

- ուսուցման նպատակները և խնդիրները, բովանդակությունը,
- ուսումնական նյութի բանակը և բարդությունը,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- ուսումնական ժամաքանակը,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները,
- ուսուցման կազմակերպման պայմանները,
- ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Համագործակցային մեթոդի հիմքում ընկած է համագործակցային, կոլեկտիվ աշխատանքի ձևը և այն հեշտությամբ կարելի է կիրառել նաև ներառական կրթության իրականացման գործընթացում: Սա մի միջոց է, որով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան կաշխատի և կհամագործակցի առավել բարձր կարողություններով աշակերտի հետ և աջակցություն կստանա վերջինիս կողմից: Հայտնի է, որ խմբակային կամ

զույգերով աշխատանքը ավելի է մտերմացնում աշակերտներին, այսինքն՝ դա նպաստում է, որ կրթության հատուկ կարիք ունեցող երեխաները իրենց զգան կոլեկտիվի մի մաս և ունենան իրենց ուրույն դերը: Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:Համագործակցային ուսուցումը իմաստավորվում է համատեղ գործունեության և կոլեկտիվ հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այդպիսի հաղորդակցման ձևեր կարող են լինել կազմակերպված երկխոսությունը, զուգորդված երկխոսությունը, աշակերտերի զույգերով կամ ավելի մեծ խմբով կազմակերպված աշխատանքը

Ցուրաքանչյուր առաջադրանք պետք է ունենա հստակ կառուցվածք: Անհրաժեշտ է ներկայացնել կատարվելիք առաջադրանքի քայլերի հերթականությունը: Այն պետք է հանգամանորեն բացատրել սովորողներին, ապա հարցնել որևէ աշակերտի կրկնել քայլերը և բացատրի դասընկերներին: Հռահանգները կարելի է գրել գրատախտակին:

Համագործակցային մեթոդներ

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ:

Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները:Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw):

Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի `A&M համալսարանում Է, Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից:

Հանձնարարված թեմայի սահմաններում կարող են հետազոտել ուշադրության արժանի տարբեր ոլորտներ, օրինակ՝ տեքստի բառապաշարը, քերականությունը, հիմնական գաղափարները, ոճը երկխոսություններ կազմելու ձևերը և այլն: Աշակերտներ պետք է նախօրոք ծանոթանան բառապաշարին:

Jigsaw Review (for Advanced-Beginner Learners)

Water

Milk

Juice

Tea

Coffee

Example Clues

Water

A. Has 5 letters

B. Starts with the letter w

C. Ends with the letter r

D. Has two syllables

Milk

A. Has 4 letters

B. Starts with the letter m

C. Ends with the letter k

D. Has 1 syllable

Juice

A. Has 5 letters

B. Starts with the letter j

C. Ends with the letter e

D. Has 1 syllable

Tea

A. Has 3 letters

B. Starts with the letter

C. Ends with the letter a

D. Has 1 syllable

Coffee

A. Has 6 letters

B. Starts with the letter c

C. Ends with the letter e

D. Has 2 syllables

(English Teaching Forum AE ,Volume 60.Number 3. 2022)

Այս մեթոդի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ սովորողները պատասխանատվություն են կրում և հանդես են գալիս և՛ սովորողի և՛ սովորեցնողի դերերում :

Շրջագայություն պատկերասրահում:

Սա ”Խճանկար” մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք:

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան:Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն: Տեքստից ընտրվում է ստեղծագործության բովանդակությունը ներկայացնող երեք պարբերություն , որոնք երեք բանալիներն են: Կազմվում է մեկ նախադասություն սեփական բառերով , որն արտահայտում է տեքստի հիմնական բովանդակությունը, որն էլ կողպեքն է:

Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել

իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Մտածի՛ր –զույգ կազմի՛ր – հաղորդի՛ր (Think / Pair / Share)

Թույլ է տալիս սովորողին մտածել ինքնուրույն, կիսվել իր մտքերով ընկերոջ հետ, քննարկել և ըմբռնել թեման: Նրանք խորհրդածում են որոշակի հարցի կամ հիմնախնդրի շուրջը,թեման քննարկում են զույգերով և զույգերը արդյունքները ներկայացնում են դասարանին, կիրառելով մտածողության տարբեր տեսակներ՝ քննադատական մտածողություն. փոխհամաձայնություն, խնդրի լուծում կամ բանավեճ ՝ հակադիր տեսակների շուրջ:

Անկյուններ

Սա համագործակցության ուսումնառության մեթոդներից է, որի նպատակը հակասական հարցերի լուծ բանավեճ ծավալելն է: Դրական դիրքորոշում ունեցողները հավաքվում են դասասենյակի մի անկյունում, բացասական դիրքորոշում

ունեցողները՝ մյուս անկյունում ,իսկ միջանկյալ դիրքորոշում ունեցողները՝ երրորդ անկյունում և մի քանի րոպե քննարկումից հետո իրենց դիրքորոշումն ամրապնդող համոզիչ փաստարկներ են բերում և ընտրում են իրենց խոսնակներին.

-յուրաքանչյուր խմբի խոսնակը ներկայացնում է խմբի դրքորոշումը, հիմնավորելով այն

-հետո նրանց են միանում խմբի անդամները

-քննարկման ընթացքում մասնակիցները կարող են փոխել իրենց կարծիքը և տեղափոխվել այլ խումբ

-խմբերը պետք է աշխատեն ,մտածեն, գտնեն նոր փաստարկներ՝ իրենց տեսակետը հաստատելու և շատ կողմնակիցներ ձեռք բերելու համար :

Քննարկումից հետո յուրաքանչյուր խումբ իր դիրքորոշումը հիմնավորող փաստարկներ է բերում :

-գրել թեմային առնչվող որևէ(բանալի) առանցքային բառ գրատախտակին

-գրել այդ բառին առնչվող բառերն և արտահայտությունները

-իրար հետ առնչվող բառերը գծիկներով միացնել

-գրել շատ մտքեր:

Վեբ-Որոնում (WEB-WUEST)

Վեբ-որոնման ընթացքում աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ և տեղեկույթ հիմնականում համացանցի աղբյուրներից: Վեբ-որոնման մեթոդի ուսուցումը ենթադրում է ելակետային մի խնդիր, որը գործնական լուծման կարիք ունի: Սովորողներին առաջադրվում է հետազոտել վարկածները , մոդել կառուցել կամ խնդիր լուծել:Այս մեթոդը չի բացառում համացանցից բացի նաև տեղեկատվության այլ աղբյուրների (գրքեր, հոդվածներ) օգտագործումը: Այս մեթոդի ուսուցման հիմնական նպատակներն են.

-գիտելիքների ձեռք բերում և յուրացում,

-վերլուծական և քննադատական մտածողության զարգացում,

- համագործակցային հմտությունների ձևավորում և զարգացում

-կատարված հետազոտության արդյունքների ներկայացման կարողությունների ձևավորում

-սեփական վարկածներն առաջադրելու, հիմնավորելու կարողություն

- տարբեր տեխնիկական միջոցներից օգտվելու հմտություն:

Խմբային ուսուցման դեպքում պետք և նախապես հստակեցնել խմբի յուրաքանչյուր անդամի պարտականությունները և քայլերը:

Ձնագնդի (Snowball)

Այս մեթոդի նպատակն է մասնակիցների կարծիքների փոխանակում, ընտրություն, հավաքում և խմբի գաղափարների կազմում:

Սա թույլ է տալիս զարգացնել սովորողների խոսելու ու լսել հասկանալու հմտությունները , բարելավել ու ընդլայնել բառապաշարը , սովորել նոր բառեր ու արտահայտություններ:

Իմ հիպերմարկետը

Աշակերտներն այցելում են հիպերմարկետների կայքերը: Նրանք կազմում են վաճառվող ապրանքների, դրանցում առկա բաժինների և այլնի ցանկը:

Աշակերտները բաժանվում են խմբերի և նախագծում իրենց սեփական հիպերմարկետները: Այդ աշխատանքի համար նրանք օգտագործում են Paint կամ Word ծրագրերի նկարելու հնարավորությունները՝ հիպերմարկետի հիմնական հատակագծերը նախագծելու համար: Աշակերտները նաև պատրաստում են գովազդային թռուցիկներ կամ կայքեր:

Աշխատանքն ավարտելուց հետո նրանք նախագծում են իրենց հիպերմարկետի՝ ուղիղ եթերում ցուցադրվելու համար նախատեսված գովազդ և ներկայացնում այն ամբողջ դասարանին՝ ցույց տալով պատրաստված հատակագծերը, թռուցիկը/կայքը:

Խաղեր

Համագործակցային ուսուցումը կարելի է կիրառել **խաղերի** ձևով, քանի որ խաղերը զարգացնում են կոլեկտիվ մտածողությունը: Հատկապես կրտսեր տարիքային խմբերում խաղերը կարելի է կիրառել ամրապնդելու համար արդեն յուրացված բառապաշարը:

Նկարի՛ր որ գուշակեն - Draw to Describe (Guess What?)

Խաղաթղթերի վրա կան նկարներ որոշակի թեմաներով (Animals / Food) : Դասարանը բաժանվում է խմբերի 3-5 աշակերտ ,որոնք նստում են շրջանաձև՝ իրար դեմ դիմաց: Յուրաքանչյուր խմբին տրվում է 5-10 Guess What? քարտեր ,որոնք դրվում են մի տուփի մեջ, որը դրվում է դասարանի կենտրոնում: Ընտրում ենք մի խաղացող ,որը հանդես է գալիս որպես նկարագրող, իսկ մյուսները պետք է գուշակեն: Նկարագրողը ասում է միայն թեմայի անվանումը, ապա նկարում է գրատախտակին այդ թեմային վերաբերվող խաղաթղթի առաջին բառը առանց խոսելու , ապա ՝հաջորդը (դրանք 6-ն են) : Մյուս աշակերտները հարցեր են տալիս և փորձում են գուշակել բառը: Պետք է գուշակեն խաղաթղթի բոլոր նկարները սահմանված ժամանակահատվածում: Հետո նկարագրողի դերում այլ աշակերտ է հանդես գալիս:

Նկարագրի՛ր և գուշակի՛ր- Describe and Guess

Աշակերտները նստում են խմբերով:Սեղանին դրված են քարտեր, որոնց վրա բառեր են գրված: Սովորողը ընտրում է նրանցից մեկը, ապա փորձում է բացատրել բառի իմաստը առանց ասելու իրական բառը : Մյուս աշակերտները պետք է գուշակեն :

Describer: This is a small word. It’s very common in English.

Guesser: Is it *and*?.

Describer: No. We often use it before the word sun, ocean, weather.

Guesser: *The*.

Describer: Right.

Collaborative Mind Mapping (Մտքերի քարտեզագրում)

Ընտրել որևէ թեմա(School, Nature, Family) հաշվի առնելով աշակերտի տարիքային առանձնահատկությունները: Դասարանը բաժանել 3խմբի: Առաջադրվում են հարցեր <<Դպրոց >> թեմայի շուրջ և ամեն մի խումբ պատասխանում է մի հարցի.

1.Who goes to school? (students)

2. What are there in the school? (things)

3. What subjects do you learn? (Subjects- Armenian, English , Maths, PE etc.) Աշակերտները քարտեզագրում են իրենց հարցերի պատասխանները գրատախտակին:

Մի այլ տարբերակ.Ուսուցիչը գրատախտակին գրում է որոշակի թեմային վերաբերվող բառեր տառերի խառը դասավորվածությամբ: Աշակերտները պետք է կազմեն ճիշտ բառը և ըստ իմաստի լրացնեն գաղափարների քարտեզը:

MIND MAP

WORLD

1. DIRECTIONS (STEW-WEST, THORN-NORTH)

2. NATURAL FEATURES (VERRIS - RIVERS , SLEAK – LAKES)

3. FEATURES MADE BY HUMANS (TESTERS – STREETS , ICITES- SITIES)

.

Եզրակացություն

Հանրակրթության այսօրվա պահանջներն են կարողունակությունների զարգացումը,վերջնադյունքների ապահովումը, ուսումնաճանաչողական մտածողության ձևերի և մեթոդների յուրացումը: Անհրաժեշտ է զարգացնել աշակերտների ինքնաճանաչողականությունը,որպեսզի նրանք կարողանան ճանաչել իրենք իրենց և իրենց ընկերներին, սովորել սովորեցնելը: Գոյություն ունի խոր վստահություն, որ համագործակցային ուսուցումը նպաստում է սովորելու արդյունավետությանը: Համագործակցային ուսուցումը ենթադրում է բոլոր սովորողների ակտիվ մասնակցություն ուսուցման գործընթացում:

Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքների ձեռքբերման գործընթացում նրա ակտիվ և անմիջական մասնակցությունը: Համագործակցության մեթոդների օգնությամբ հնարավոր է իրագործել ուսուցման արդյունավետ գործընթաց , երբ սովորողները աշխատում են զույգերով կամ փոքր խմբերով օգնելով միմյանց , որը նպաստում է հաղորդակցական կարողությունների զարգացմանը և ավելի արդյունավետ է դարձնում դասավանդումը և ուսուցումը:

<<Այն, ինչ այսօր երեխաները կարող են անել միասին, վաղը նրանք կարող են անել միայնակ**>>**

Լև Վիգոտսկի

Գրականություն

1.Անգլերեն լեզու. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր. Երևան 2007

2. Անգլերեն. Ուսուցիչների հնգօրյա վերապատրաստումների ծրագիր և նյութեր Երևան. Անտարես.2008

3. Wikipedia.org Համագործակցային ուսուցում

4. Ս. Սարուխանյան և ուրիշներ <<Փուլային ուսուցման եղանակ>> Ձանգակ. Երևան.2014

5.openschool.am/wp-content/uploads/.../101_method1.doc

6. www.noravank.am

7. www.usum.am/-ld32/3220-2-doc

8. gps: am/ media/journal/2014n16/37 pdf

Ա.Ավոյան<<Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում>>

9.LT&A Sharan 2001(1)doc

10.Activate: Games for Learning American English.Teacher's Manual.2013.

11.English Teaching Forum . AE . Volume 54 . Number 2. 2016

12. English Teaching Forum . AE . Volume 60.Number 3 2022

13. Gibbons_Scaffolding Language, Scaffolding Learning_ Teaching English Language Learners Chapter 3